

**Հայաստանի
անկախության
հռչակումից
հետո
հրամայական
անհրաժեշտություն
առաջացավ
վերափոխել
երկրի
սնեսական
համակարգը,
ինչը անհամեմատ
բարդ ու ծանր
փորձություն էր
նորանակախ
դեռության
համար:**

Եթե երկրի քաղաքական անկախությունը հռչակվում է պետության խորհրդանշաններից մեկի՝ դրոշի բարձրացմամբ, այդ երեւոյթը միայն ազդանշում է տնտեսական նոր հարաբերությունների ձեւավորման անհրաժեշտության մասին: Ու քանի դեռ քաղաքական ձեռքբերումները չեն ամրապնդվում եւ հիմնվում տնտեսական նոր բազիսի վրա, դրանք կարող են միշտ առկախ մնալ եւ անհաջողության դեպքում անդառնալի վնաս հասցնել հետագա զարգացմանը, նաեւ՝ վարկաբեկել փոփոխությունների նշանակությունը: Ավելին՝ անհաջողությունը հասարակությանը կարող է ներարկել անկիարժեքության բարդույթ, որը քայքայիչ ազդեցություն ունի հանրույթի բարոյականության ու սեփական ուժերին հավատալու եւ վստահելու գենի վրա:

Համայնավարական տնտեսակարգից շուկայական հարաբերություններին անցումը նախկին Խորհրդային Միության, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության, տնտեսական տա-

րածքում պայմանավորված էր մի շարք առանձնահատկություններով, որոնցից հիմնականը հետեւյալն էին.

- Արտադրության միջոցների (հողի, աշխատանքի միջոցների եւ առարկայի) գրեթե 100%-ոց պետական սեփականության առկայությունը, որից մասնավորին անցումը (հայտնի էր, որ ազատ շուկայական հարաբերություններն առաջին հերթին ենթադրում են մասնավոր սեփականություն եւ բազմակացութեւ տնտեսություն) պահանջում էր ամենից առաջ քաղաքական կամքի դրսեւորում եւ վերափոխումների իրականացում (սչենք, որ օրինակ՝ Բելառուսում կամ Թուրքմենստանում այդպես էլ շուկայական արմատական վերափոխումներ չիրականացվեցին): Այսինքն՝ խոսքը վերաբերում է ընդգրկմամբ ու խորությամբ նախադեպը չունեցող փոփոխություններին (նկատենք, որ նախկին Խորհրդային Միությունը զբաղեցնում էր երկրագնդի ցամաքի 1/6-ը).
- Վերափոխումների իրականացման փորձի պակասը: Ինչպես դեռեւս

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՃԱՆԱԴԱՐՅԻՆ.

**ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ
ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԸԻՄՆԱՇԱՐՑԵՐ**

Աշոտ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ՀՀ կառավարության
առընթեր
պետական գույքի
կառավարման
վարչության
պետի տեղակալ,
տնտեսագիտության
դոկտոր,
պրոֆեսոր*



1990-ականների սկզբին դիպուկ արտահայտվեց այն ժամանակ Լեհաստանի նախագահ Լ. Վալենսան, ողջ աշխարհը գիտե, թե ինչպես անցում կատարի կապիտալիզմից սոցիալիզմին, սակայն ոչ ոք չգիտի, թե ինչպես անցնել սոցիալիզմից կապիտալիզմին:

● Շուկային անցման ծրագրերի մշակման, դրա քայլերի, տեմպերի եւ ժամանակահատվածի վերաբերյալ նորանակախ պետությունների սկսած բանավեճերն ու քննարկումները էլ ավելի խճճեցին անցման մարտավարության, առավել եւս ռազմավարության ընդունման ու կիրառման միջոցառումները, ինչն անորոշություն եւ հավատի կորուստ էր նշանակում բնակչության մեծ մասի շրջանում:

● Նախկին Խորհրդային Միությունը իր քաղաքացիների փոխարեն ինքն էր կայացնում ցանկացած որոշում. մարդն իր ծնված օրից պետության «սեփականությունն» էր, նա էր կանխորոշում՝ որ մանկապարտեզը գնալ, որ դպրոցը, որ բուհը, ուր գնալ աշխատանքի, ուր գնալ հանգստանալու եւ այլն: Այստեղ տեղին է հիշել խորհրդային պլանային համակարգում երկար տարիների աշխատանքային փորձ ունեցող (նա նաեւ 3 տարի այդ համակարգի կազմակերպման խորհրդատու է եղել Կուբայի առաջնորդ Ֆ. Կաստրոյին) պրոֆ. Յուրի Մովսիսյանի խոսքը, թե ինքը երկար ժամանակ մտածում էր՝ կա արդյոք մի պլանային ցուցանիշ, որ Խորհրդային Հայաստանն ինքնուրույն, առանց Մոսկվայի իմացության է պլանավորում: Պարզվում է՝ այդպիսի ցուցանիշ կա՝ տվյալ ուսումնական տարում առաջին դասարան գնացողների թիվը: Գուցե սրանում չափազանցություն կա, բայց ինչպես ասում են՝ այն իրականությունից հեռու չէ: Այսինքն՝ երկրի քաղաքացիները, ովքեր պետք է փոփոխություն-

ների ենթարկեին իրենց գիտակցությունը՝ նոր հարաբերություններին անցնելու համար, դրան պատրաստ չէին, հայտնի է նաեւ, որ մարդու գիտակցությունն ամենաինտերգիոն մատերիան է:

● Վերափոխումներ իրականացնողների պակասը: Թեեւ հրապարակում հայտնվեցին տարբեր մակարդակի եւ «փորձառության» վերափոխիչներ, սակայն նրանք ընթացքում էին փորձ ձեռք բերում, եւ իրենք կարիք ունեին շուկայական տնտեսության կառուցման խոր ու փորձարկված գիտելիքի, ինչպես նաեւ ոչ պակաս կարելուր նշանակություն ունեցող՝ կազմակերպման ու տեսական շուկայական հիմնադրույթներ տեղայնացնելու եւ ադապտացնելու փորձի:

Հայաստանը, լինելով նախկին ԽՍՀՄ հանրապետություններից մեկը, չէր կարող հաշվի չառնել այն իրողությունները, որոնց մեջ հայտնվեց 1990-ականների սկզբին: Սակայն շուկային անցման վերոնշյալ դժվարություններին, որ հատկանշական էին մեր հանրապետությանը, ավելացան Եական հանգամանքներ, որոնց չհանդիպեցին մյուսները: Խոսքը 1988-ի՝ պատմության մեջ որպես Սպիտակի երկրաշարժ մնացած արհավիրքի մասին է, որի հետեւանքով հանրապետության տարածքի (հիմնականում հյուսիսային) 1/3-ի վրա գտնվող արտադրական եւ սոցիալական կառույցները (շենքեր եւ շինություններ) բառիս իսկական իմաստով հավասարվեցին հողին, չխոսեք մարդկային ահռելի կորուստների մասին: Հասկանալի է նաեւ, որ աղետի հետեւանքների վերացման համար պահանջվում էին նյութական, ֆինանսական հսկայական ռեսուրսներ: Ըստ էության՝ աղետի գոտի հասկացությունը գործածությունից դուրս եկավ միայն 2000-ականներին:

2գալի միջոցներ էր պահանջում նաեւ հարեւան պետության հետ պատերազմը: Բացի այդ, հակամարտությունը հանգեցրեց հարյուր հազարավոր գաղթականների հոսքի, գազամուղի ու երկաթգծի շրջափակման, որը շարունակվում է առայսօր:

Այս պայմաններում զգալի բարդացան տնտեսակարգի փոփոխությունները, եւ դրանք զուգակցվեցին շուկայի կայացման ու կառուցման հետ:

Տնտեսական վերափոխումները սկսվեցին գների ազատականացմամբ, հողի եւ գյուղատնտեսական տեխնիկայի, բնակարանային ֆոնդի, արտադրության միջոցների մասնավորեցմամբ (սեփականաշնորհմամբ), շարունակվեցին բանկային, բյուջետային, մաքսային ու հարկային, դատաիրավական եւ մյուս համակարգերի ձեւավորմամբ ու կատարելագործմամբ: Իրականացված բարեփոխումների արդյունքում հանրապետության կարելուր ձեռքբերումներից մեկը մասնավոր սեփականության իրավունքի կայացումն էր, ինչի հետեւանքով ներկայում ՀՆԱ-ի շուրջ 85%-ն ապահովում է մասնավոր հատվածը, որը նաեւ ժողովրդավարության կայացման տնտեսական գրավականն է:

Հայաստանի Հանրապետության եւ տարածաշրջանային մեր հարեւանների տնտեսությունների չափերը բնութագրող մի շարք տվյալներ ներկայացված են աղյուսակ 1-ում:

ՀՀ համախառն ներքին արդյունքը եւ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ցուցանիշները բերված են աղյուսակ 2-ում: Աղյուսակի տվյալներից երեւում է, որ 1994-2008թթ. մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն ավելացել է շուրջ 20 անգամ, ինչը տնտեսության դինամիկ զարգացման արդյունք է: Նույնը չի կարելի ասել, սակայն, բնակչության կենսամակարդակի, կյանքի որակի բարձրացման վերաբերյալ, ինչպես նաեւ



Մակար ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՊ ընկերության գործադիր տնօրեն, տնտեսագիտության թեկնածու

Աղյուսակ 1.

ՀՀ եւ հարեւան երկրների տնտեսությունների չափերը²

| Երկրներ | Բնակչություն (միլիոն) | Տարածք (հազ. քմ.) | Բնակչության խտությունը (մարդ 1 քմ. հաշվով) | Պատմական ազգային նվաճում | | 1 շնչի հաշվով համախառն ազգային նվաճում | | Գնորդականության համարժեքով հաշվարկված համախառն ազգային նվաճում | | | Պատմական ներքին աղբյուր | |
|----------|-----------------------|--------------------|--|---------------------------------------|----------------------|--|----------------------|--|---|----------------------|-----------------------------------|---|
| | 2007 2006 | 2007 2006 | 2007 2006 | Վրաց ԱՄՆ դոլլար 2007 2006 | Տեղը 2007 2006 | ԱՄՆ դոլլար 2007 2006 | Տեղը 2007 2006 | Մլրդ ԱՄՆ դոլլար 2007 2006 | 1 շնչի հաշվով ԱՄՆ դոլլար 2007 2006 | Տեղը 2007 2006 | Մեղ (%) 2006- 2005- 2006 | 1 շնչի հաշվով %- անց ան 2006-2007 2005-2006 |
| Հայաստան | 3 3 | 30 30 | 107 107 | 7.9 5.8 | 123 132 | 2,630 1,920 | 125 133 | 17.7 14.9 | 5,870 4,950 | 117 127 | 13.8 13.3 | 13.8 13.6 |
| Ադրբեջան | 9 8 | 87 87 | 104 103 | 22.6 15.6 | 84 95 | 2,640 1,840 | 124 134 | 56.3 46.1 | 6,570 5,430 | 114 123 | 25.0 34.5 | 23.9 33.0 |
| Վրաստան | 4 4 | 70 70 | 83 64 | 9.3 7.0 | 117 122 | 2,120 1,580 | 135 137 | 21.0 17.2 | 4,760 3,880 | 129 140 | 12.4 9.4 | 13.3 10.4 |
| Իրան | 71 70 | 1,745 1,745 | 44 43 | 251.5 205.0 | 29 30 | 3,540 2,930 | 110 116 | 789.7 686.9 | 10,840 9,800 | 89 87 | 7.8 4.6 | 6.4 3.1 |
| Ճնուրքիա | 74 73 | 784 784 | 96 95 | 593.0 393.9 | 17 20 | 8,030 5,400 | 77 83 | 946.7 613.7 | 12,810 8,410 | 80 99 | 4.6 6.1 | 3.3 4.8 |
| Աշխարհ | 6,610 6,538 | 133,946 133,946 | 51 50 | 52,880 48,694.1 | | 7,995 7,448 | | 65,752.3 60,210.0 | 9,947 9,209 | | 3.8 3.8 | 2.6 2.6 |

տնտեսության մրցունակության ապահովման, ապրանքների ու ծառայությունների՝ համաշխարհային շուկաներին ինտեգրվածության մասին:

Տնտեսական կայուն աճի ապահովման եւ արտաքին գործոնների (համընդհանուր ճգնաժամեր, տրանսպորտային ու աշխարհագրական գործոններ եւ այլն) ազդեցությունները մեղմելու համար առաջին հերթին անհրաժեշտ է ապահովել տնտեսության մրցունակությունը: Միջազգային փորձագետների կողմից մեր տնտեսության գնահատականը վերջին տարիներին տրվում է մրցունակության զեկույցների տեսքով: Այսպես, Համաշխարհային տնտեսական ֆորումի 2009-10թթ. Մրցունակության համաշխարհային զեկույցում (ՄՀԶ) Հայաստանը 133 երկրների շարքում զբաղեցնում է 97-րդ տեղը՝ Նախորդ տարվա համեմատ մնալով անփոփոխ: 2005-08թթ. Հաստատում արձանագրվում էր տնտեսական բարձր աճ, միաժամանակ՝ միջազգային մրցունակության անկում (համաձայն ՄՀԶ-ի): Այս երեւույթը Ազգային մրցունակության առաջին զեկույցում բնութագրվել էր որպես «աճ-մրցունակություն» պարադոքս, եւ մատնանշվում էին հիմնարար խնդիրների առկայությունն ու աճի շարժիչների անկայունությունը: Սպասելի էր, որ վերջինները դրսևորվելու են արտաքին անբարենպաստ շուկերի ժամանակ, ինչպիսին էր համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Այսպես, 2009թ. սպասվում է ՀՆԱ-ի կտրուկ նվազում (տես՝ գծապատկեր 1):

Աղյուսակ 2.

ՀՀ ՀՆԱ-ն եւ բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 1994-2009թթ. (ընթացիկ գներով)³

| Տարեթիվ | ՀՆԱ | | ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով | | Ցուցանիշներ | |
|---------------------|-----------|----------------|-----------------------------------|------------|--|---|
| | մլն դրամ | մլն ԱՄՆ դոլլար | դրամ | ԱՄՆ դոլլար | դրամ/դոլլար միջին տարեկան փոփոխություն | մլն դոլլար բնակչության միջին տարեկան թիվը (հազար) |
| 1994 | 187 065 | 628 | 56 541 | 190 | 297.74 | 3 308.5 |
| 1995 | 522 256 | 1 287 | 160 467 | 395 | 405.88 | 3 254.6 |
| 1996 | 661 209 | 1 599 | 203 612 | 492 | 413.44 | 3247.4 |
| 1997 | 804 336 | 1 639 | 248 091 | 506 | 490.77 | 3242.1 |
| 1998 | 955385 | 1 892 | 259 309 | 585 | 504.89 | 3 235.2 |
| 1999 | 987444 | 1 845 | 305 757 | 571 | 535.06 | 3 229.5 |
| 2000 | 1 031 338 | 1 912 | 320 182 | 593 | 539.53 | 3 221.1 |
| 2001 | 1 175 877 | 2 118 | 365 849 | 659 | 555.08 | 3 214.1 |
| 2002 | 1 362 472 | 2 376 | 424 235 | 740 | 573.35 | 3 211.6 |
| 2003 | 1 624 643 | 2 807 | 505 914 | 874 | 578.77 | 3 211.3 |
| 2004 | 1 907 945 | 3 577 | 593 636 | 1113 | 533.45 | 3 214.0 |
| 2005 | 2 242 881 | 4 900 | 697 088 | 1523 | 457.69 | 3 217.5 |
| 2006 | 2 656 190 | 6 384 | 824 622 | 1982 | 416.04 | 3 221.1 |
| 2007 | 3 149 283 | 9 206 | 976 068 | 2853 | 342.08 | 3 226.5 |
| 2008 | 3 646 111 | 11 917 | 1 127 431 | 3685 | 305.97 | 3 234.0 |
| 2009 (1-10 ամիս) | 2 486 300 | 6 866 | | | 385.65 ¹ | |

* 2009թ. հոկտեմբերի միջինը

2009-10թթ. Մրցունակության համաշխարհային զեկույցում արտահայտված են նաեւ փորձագետների կարծիքները՝ Հայաստանի մրցունակության ներկա ամենաեական 10 առավելությունների եւ թերությունների վերաբերյալ⁵, որոնք ներկայացված են աղյուսակ 3-ում: Մրցունակության հաշվեցուցակի կազմը բավական կայուն է: Հայաստանի մրցակցային հիմնական առավելություններն են ՄԻԱՎ/ԶԻԱԳ-ի եւ մալարիայի տարածվածության խիստ ցածր մակարդակը եւ դրանց ազդեցությունը գործարարության վրա: Այս ցուցանիշներին հաջորդում են պետական պարտքի փոքր չափը, աշխատանքի շուկայի կարգա-

վորումը, ինչպես նաեւ գյուղատնտեսության ոլորտում վարվող քաղաքականությունը, հանցագործությունների եւ ահաբեկչության հարուցած ծախսերը: Թերությունների ցուցակը կրկին գլխավորում են շուկայում գերիշխող խմբերի առկայությունը եւ մրցակցության անկատար մակարդակը, որոնք մրցակցության կարգավորման անարդյունավետ քաղաքականության հետեւանք են: Նախորդ տարվա համեմատ ամենաեական թերությունների շարքին են դասվել մաքսային ընթացակարգերի բեռը, տեխնոլոգիաների պետական գնումների քաղաքականությունը, բիզնես կրթության որակը, սպառողին կողմնորոշման աստիճանը



եւ իրավասությունների պատվիրակման կամեցողությունը:

Մեր ուսումնասիրությունները նույնպես թույլ են տալիս բացահայտել ՀՀ տնտեսության ուժեղ եւ թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները:


Ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ Հայաստանի տնտեսությունն ունի ուժեղ եւ թույլ կողմեր, որոնք բերված են աղյուսակ 4-ում: Աղյուսակ 5-ում ներկայացված են ՀՀ տնտեսության հնարավորություններն ու սպառնալիքները: Հաշվի առնելով տնտեսության հնարավորություններն ու ուժեղ կողմերը եւ մեղմացնելով կամ չեզոքացնելով սպառնալիքներն ու թույլ կողմերը՝ պետք է մշակել համապատասխան քաղաքականություն, որը հետագա զարգացման ծրագիր եւ ուղեցույց կդառնա առաջիկա մի քանի տարվա համար: Ծիշտ է՝ մեզանում մշակվում է միջնաժամկետ ծախսերի եռամյա ծրագիր, սակայն պետք է եւ անհրաժեշտ է ունենալ սոցիալ-տնտեսական զարգացման երկարաժամկետ (առնվազն հնգամյա) նախ՝ ռազմավարություն, ապա եւ ծրագիր:

Հայաստանի Հանրապետության բացահայտված ուժեղ կողմերը տնտեսական հեռանկարային զարգացման հիմնական նախադրյալներն ու ռեսուրսներն են: Դրանք առկայությունը եւ/կամ դիսմիկան Հայաստանի տնտեսական զարգացման միջոցների ընտրության եւ արդյունավետ գործարկման նախապայմանն ու երաշխիքն են: Հետեւաբար՝ այս ուղղություններով իրականացվելու է պահպանության եւ շարունակական ամրապնդման քաղաքականություն՝ դրանք դասելով մարտավարական գերակայությունների շարքին:

Թույլ կողմերը այն գործոններն են, որոնք ներկա մակարդակը եւ/կամ դիսմիկան սահմանափակում են ուժեղ կողմերի օգտագործման հնարավորությունները: Այս շարքը չի ներառում պարզապես թույլ ցուցանիշների շրջանակը: Ընտրված են միայն այն գործոնները, որոնք բարելավման ուղղությամբ համապատասխան (աջակցող եւ խթանող) քաղաքականություն չկարելու դեպքում տնտեսական զարգացման միջոցները արդյունավետ իրագործվել չեն կարող կամ դատապարտված կլինեն ձախողման:

Աղյուսակ 5-ի «**Հնարավորություններ**» սյունակում նշված գործոններն այն ուղղություններն են, որոնք տնտեսության ուժեղ կողմերի արդյունավետ օգտագործման պարագայում Հայաս-

Փճապատկեր 1.



Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ԱՎԾ), Համաշխարհային տնտեսական ֆորում (ՀՏՖ), 2009, 2008, 2007, 2006, 2005

Աղյուսակ 3.

Հայաստանի մրցունակության առավելություններն ու թերությունները

| Ուշագրավ առավելություններ | Վարկանիշ | Ուշագրավ թերություններ | Վարկանիշ |
|--|----------|--|----------|
| Մալաթիայի ազդեցությունը գործառնության վրա | 1 | Հալածանաչողության քաղաքականության արդյունավետությունը | 132 |
| Մալաթիայի դեպոզիտի քանակը* | 1 | Մաքսային ընթացակարգերի բեռը | 131 |
| ՄԻՎՆԾԻՄԳ-ի տարածվածությունը* | 15 | Շուկայում գերիշխող խմբերի առկայությունը | 129 |
| Պետական պարտքը* | 19 | Վենյուրային կապիտալի մատչելիությունը | 129 |
| Աշխատանքի հեռացման հետ կապված ծախսերը* | 19 | Տեղական մրցակցության ուժգնությունը | 128 |
| Աշխատանքի ընդունելու և աշխատանքից ազատելու գործելակերպը | 22 | Բիզնես կրթության/ դպրոցների որակը | 125 |
| Հանցագործությունների և բռնության հետևանքով գործառնության ծախսերը | 23 | Արտաքին շուկաների չափը* | 125 |
| Միարևելյան հետևանքով գործառնությանը հասցվող վնասը | 26 | Իրավասությունները պատվիրակելու կամեցողությունը | 125 |
| Գյուղատնտեսական քաղաքականության ծախսերը | 26 | Սպառողին կողմնորոշման աստիճանը | 124 |
| ՄԻՎՆԾԻՄԳ-ի ազդեցությունը գործառնության վրա | 34 | Տեխնոլոգիական ապրանքների պետական գնումների քաղաքականությունը | 124 |

* Վիճակագրական տվյալներ Աղբյուրը՝ Համաշխարհային տնտեսական ֆորում, 2009:

տանում կարող են ապահովել տնտեսական հեռանկարային զարգացումներ եւ, կիրառելով տնտեսական զարգացման ռազմավարական ու հիմնավորված միջոցներ, կարող են մեղմել, չեզոքացնել կամ իսպառ վերացնել թույլ կողմերի ազդեցությունը: Հնարավորությունների ընտրությունը հիմնված է իրական ներուժի առկայության վրա: Տնտեսական համակրղմանի քաղաքականության համատեքստում սրանք

գործնականում արտացոլում են հենց ՀՀ տնտեսական զարգացման ռազմավարական միջոցները:

Որպես **սպառնալիքներ** ամրագրված են այն գործոնները, որոնք ոչ միայն գույում են զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացումը, այլև սպառնում կամ շատ մոտ ապագայում կսպառնան Հայաստանի տնտեսական անվտանգությանը: Սրանք ներկայում պահանջում են անհետաձգելի մեղմ-

Աղյուսակ 4.

ՀՀ տնտեսության ուժեղ եւ թույլ կողմերը

| Ուժեղ կողմեր | Թույլ կողմեր |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Չնավորված շուկայական հարաբերություններ, կայացած մասնավոր հատված 2. Տնտեսական քաղաքականության կայունություն, կանխատեսելիություն, տնտեսական աճ 3. Տնտեսավարման համար ազատական օրենսդրական դաշտ, պետություն-գործարար կառուցողական համագործակցության բարձր աստիճան 4. Արտաքին առևտրի ազատական ռեժիմ 5. Գիտատեխնիկական առաջընթացի օբյեկտիվ նախադրյալներ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներուժ 6. Ինովացիոն զարգացման ինստիտուցիոնալ հենք 7. Դիվերսիֆիկացված էներգետիկ համակարգ 8. Արդյունաբերական ներուժ 9. Հինարարության ոլորտի զարգացման ներուժ 10. Գյուղատնտեսության զարգացման իրական նախադրյալներ 11. Զբոսաշրջության զարգացման նախադրյալներ 12. Սփյուռք 13. Տարածքային զարգացման օբյեկտիվ նախադրյալներ | <ol style="list-style-type: none"> 1. Շուկայական տնտեսության ինստիտուտների կայացման անբավարար մակարդակ 2. Ստվերային տնտեսության բարձր աստիճան, կոռուպցիա 3. Վառելիքաէներգետիկ ռեսուրսների սակավություն 4. Հեռահաղորդակցության մատչելիության և որակի պակաս, դեպի ծով անմիջական ելքի բացակայություն 5. Գիտական համակարգի ինստիտուցիոնալ հիմքերի անկատարություն, ֆինանսավորման ցածր մակարդակ, գիտություն-արտադրություն անբավարար համագործակցություն 6. Մասնավոր հատվածում գործարար կառավարման ցածր մակարդակ 7. Տարածքային զարգացման անհամաչափություն |

ման քաղաքականության իրականացում՝ հետագայում ազդեցության առավելագույնս չեզոքացման քաղաքականությամբ վերափոխվելու պայմանով:

ՀՀ սոցիալ-սնտեսական կայուն զարգացման ռազմավարությունը

Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման ռազմավարության հայեցակարգը պետք է ներկայացնի տնտեսության բոլոր ոլորտների իրական վիճակի մանրամասն վերլուծություն՝ տեղական եւ միջազգային կառույցների տված գնահատականներում, որոնց հիման վրա անհրաժեշտ է ներակայացնել տնտեսության յուրաքանչյուր ոլորտի ուժեղ եւ թույլ կողմերը, այդ ոլորտների հետագա զարգացման նախադրյալներն ու հնարավորությունները:

Զթերագնահատելով նախկինում մշակված միջնաժամկետ ծախսերի փաստաթղթերի ու առկա հիմնախնդիրների լուծման ուղղությամբ արված առաջարկների կիրառական նշանակությունը՝ դրանք նույնպես պետք է մանրամասն քննարկել եւ հաշվի առ-

նել նոր փաստաթղթում: Առավել եւս, որ ֆինանսատնտեսական համընդհանուր ճգնաժամը պարտադրում է արագ եւ համարժեք արձագանքել ստեղծված իրավիճակին:


Զբացառելով, որ կարող է լինել «տնտեսական կայուն զարգացման» վերաբերյալ թե՛ ռազմավարություն, թե՛ ծրագիր, այնուհանդերձ՝ առավել նախընտրելի է ունենալ «սոցիալ-տնտեսական կայուն զարգացման» ռազմավարություն եւ դրա հիման վրա մշակված՝ զարգացման երկարատե ծրագիր: Ինչու: Նախ՝ յուրաքանչյուր հանրային նպատակը սոցիալական որոշակի նպատակների ձեռքբերումն է կամ դրանց հասնելը:

Այս տեսանկյունից տնտեսական զարգացումը այդ նպատակներին հասնելու միջոց է: Եթե զարգացման ճանապարհին չդրվեն սոցիալական կողմնորոշիչները (հասկանանք՝ նպատակները), անորոշ կղաճառ տնտեսական զարգացումը: Այսինքն՝ ինքնանպատակ տնտեսական զարգացում լինել չի կարող: ՀՀ գործող Սահմանադրության առաջին հոդվածում Հայաստանի Հանրապետությունը հռչակված է որպես սոցիալական (եւ ոչ թե տնտեսա-

կան) պետություն: Այսինքն՝ տնտեսական զարգացման «պատվերը» պետք է լինի սոցիալական, այն պետք է սահմանվի սոցիալական ոլորտի կողմից: Օրինակ՝ բնակչության դրամական եկամուտների x կամ y չափով ավելացումը տնտեսական քաղաքականության առջեւ դնում է զարգացման տարբեր սցենարներ, այդ պատճառով կարելի է, թե ինչ մեծություն ունեն x-ի կամ y-ի արժեքները:

Երկրորդ՝ հատկապես նախկին ԽՍՀՄ-ում, սկսած 1960-ականներից, ժողովրդական տնտեսության զարգացման երկարաժամկետ (հիմնական ուղղությունները՝ 10-15-ամյա, իսկ գիտատեխնիկական համալիր զարգացման ծրագրերը՝ 25 տարվա), 5-ամյա եւ տարեկան պլաններն ունեին ոչ թե տնտեսական, այլ սոցիալ-տնտեսական անվանումը, ինչը հիմնավորված է տրամաբանական եր:

Այս մոտեցման ընդունման դեպքում պետք է ռազմավարության մեջ կամ ծրագրում սահմանել առաջիկա զարգացման (ամփոփ) սոցիալական ցուցանիշները, նպատակները, հիմնախնդիրները եւ լուծման տնտեսական ուղիները:



Աղյուսակ 5.

ՀՀ տնտեսության հնարավորությունները եւ սպառնալիքները

| Հնարավորություններ | Սպառնալիքներ |
|--|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Համաշխարհային տնտեսությանն ինտեգրում 2. Եվրամիությանն ինտեգրման գործընթաց 3. Գործարար միջավայրի բարելավմամբ՝ ներդրումային ակտիվության աճի ապահովում 4. Մտավոր ներուժի նպատակային զարգացմամբ՝ գիտելիքահենք տնտեսության ձևավորում 5. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում 6. Էներգետիկ համակարգի կարողությունների լիարժեք օգտագործում, դիվերսիֆիկացիա 7. Մրցակցային առավելությունների ձևավորում առկա համեմատական առավելություններ ունեցող ճյուղերում 8. Սփյուռքի ներուժի օգտագործում երկրի խնդիրների լուծման համար 9. Տարածքներում առկա ներուժի օգտագործման արդյունավետության բարձրացում | <ol style="list-style-type: none"> 1. Գիտական ներուժի թուլացում և սպառում, տեխնոլոգիական ետամնացություն 2. Էներգետիկ ճգնաժամ 3. Տարածքային զարգացման և ժողովրդագրական վիճակի վատթարացում 4. Սոցիալական ճգնաժամ 5. Չլուծված հակամարտություն, տարածաշրջանային մեկուսացման վտանգ |

Երրորդ՝ տնտեսության զարգացման արդի փուլում սոցիալական եւ տնտեսական խնդիրներն ու հիմնահարցերը այնպես են միահյուսվել, որ ըստ էության՝ դրանք ոչ թե միայն տնտեսական կամ սոցիալական են, այլ սոցիալ-տնտեսական:

Այսպես, եթե քննարկենք ՀՀ ներկա զարգացման ամենակարեւոր (իրատապ) առաջին եւ երկրորդ հիմնախնդիրները, դրանք աշխատատեղերի պակասն ու սոցիալական բեւեռացումն են: Եթե ընդունենք, որ սրանք սոցիալական բնույթի են, ապա դրանց լուծման ուղիները (կամ բանալիները) պետք է փնտրել տնտեսական քաղաքականության մեջ:

Կարելու է նաեւ նկատել, որ ռազմավարությունը կամ ծրագիրը չպետք է ունենա հռչակագրային բնույթ, եւ մեր կարծիքով՝ ռազմավարական ծրագիրը, վերլուծությունից գատ, պետք է պարունակի նաեւ ռազմավարությամբ առաջարկվող նպատակների իրականացման կոնկրետ միջոցառումներ՝ անհրաժեշտության դեպքում նշելով կատարող պետական կառավարման մարմինները, մեխանիզմները եւ դրանց կատարման ժամանակացույցը:

Անհրաժեշտ է նաեւ ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն ռազմավարության մեջ կամ ծրագրում շեշտել զարգացման գործոններից (միջոցներից) հատկապես՝ գիտելիքահենք տնտեսության ձեւավորումը, թեւեւ մեզանում կարելու է գիտական ներուժի որակական ցուցանիշների բարձրացման անհրաժեշտությունը, սակայն դեռեւս լիարժեք եւ որոշակի աշխատանքներ չեն տարվում այդ ուղղությամբ պետական քաղաքականության մշակման ու իրականացման առումով: Կարծում ենք՝ ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման ռազմավարության մեջ պետք է տարանջատվեն գիտական այն ոլորտները, որոնց զարգացումը Հայաստանի Հանրապետության համար ունի կարեւոր նշանակություն, պետք է հստակ ամրագրվեն այդ ոլորտներին ներկայացվող պահանջները՝ եւ՝ որակական, եւ՝ քանակական ցուցանիշներով: ■

1. Անցումային տնտեսությամբ Նախկին համայնավարական երկրների փորձի մասին ավելի մանրամասն տես՝ Ս. Դավոյան, Ա. Մարկոսյան, Հ. Սարգսյան, Վերափոխումները անցումային տնտեսությամբ երկրներում, Եր., Տիգրան Մեծ, 2004, 736 էջ

2. Կազմվել է՝ ըստ World Development Indicators 2009, The World Bank, pp. 14-16; World Development Indicators 2008, The World Bank, pp. 14-16

3. Կազմվել եւ հաշվարկվել է՝ ըստ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի ազգային հաշիվները. տարեկան եռամսյակային տվյալներ 2009, Վիճակագրական ժողովածու, Երեւան 2009, էջ 24, եւ ՀՀ ԱՎԾ այլ տվյալներ

4. Տես՝ Հայաստանի ազգային մրցունակության գեկույց 2009. Լորարարության Էկոհամակարգի սերմանումը, «Տնտեսություն եւ արժեքներ» հետազոտական կենտրոն, Եր., Փրինթինգո, 2009

5. Գործոնների՝ առավելություն կամ թերություն դասակարգելու սահմանը՝ 50 վարկանիշային դիրքն է, այսինքն՝ որեւէ ցուցանիշ համարվում է երկրի համար մրցակցային առավելություն այն դեպքում, եթե այն իր վարկանիշով՝ 50 լավագույն արդյունքների մեջ է: